ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «16» 04 2015թ. № 515-Ա

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 12.1 մասը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան ընդունված փաստաթղթերով կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով ընդունված տեխնիկական կանոնակարգերով սահմանված համապատասխանության հայտարարագրի գրանցման վճարի չափը՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն հրամանի հսկողությունը վերապահել ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գ. Բաղալյանին:

ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆ

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2015 թվականի ապրիլի 16 -ի N 515-Ն հրամանի

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան ընդունված փաստաթղթերին (այսուհետ՝ Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերին) կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով ընդունված տեխնիկական կանոնակարգերին (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերին) համապատասխան տրված համապատասխանության հայտարարագրի գրանցման վճարի չափը որոշվում է N1 և N2 բանաձևերին համապատասխան.

1) Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերին համապատասխան՝ (բանաձև N1)

   $C_{ՀՀ} = 3000 + N \times 1000$ (ՀՀ դրամ)

2) Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերին համապատասխան՝ (բանաձև N2)

   $C_{ԵՏՄ} = 4000 + N \times 1000$ (ՀՀ դրամ)

   որտեղ՝

N-ը հայտարարագրի վավերության տարիների թիվն է, որը չի կարող գերազանցել 5-ից, n≤5)

$C_{ՀՀ}$ - Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերին համապատասխան տրված համապատասխանության հայտարարագրի գրանցման վճարի չափն է.

$C_{ԵՏՄ}$ - Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերին համապատասխան տրված համապատասխանության հայտարարագրի գրանցման վճարի չափն է: